Ը· ՏԱՐԻ 2319 ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 29 ՀՈՌԻ 4384 8 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1891 16 ՐԷՊԻՒԼ ԷՎՎԷԼ 1309 ԵՐԵՔՇԱԲԹԻ

20 ՓԱՐԱ

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՑԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՂՐԿԵԼ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Կ· Պոլիս

درعليه‌ده غلطه‌ده نورادونكيان خانده آرهولك
غزته‌سی اداره‌سنه

Direction du journal AREVELK
Galata, CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

20 ՓԱՐԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ· Պոլսոյ համար Տարեկան դաշնկան արժաթ	150
» » Վեցամսեայ » »	75
» » Եռամսեայ » »	40
Օտար երկիրներէ Տարեկան Ֆրանք	56
» » Վեցամսեայ »	28
Ընտիր Թուղթի վրայ [illegible] Տարեկան Օսմ· Ոսկի	2
Գաւառաց Թղթատարի ծախքը միջինեան	Ղրշ· 50

Խմբագրութեան ուղղուած [illegible] գրութիւն ետ չի դարձուիր·

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ· ՊՈԼԻՍ, 8|20 ՀՈԿՏ· 1891

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Պ· Արթուր Պալֆուր, քեռորդի Լորտ Սալզպըրիի, վարչապետ Իռլանտայի, յաջորդ կարգուեցաւ հանգուցեալ Պ· Ուիլեըմ Սմիթի, իբրեւ Գանձարանի առաջին Լորտ, (կամ՝ ելմտական ընդհանուր քննիչ Նախարարական պաշտօնարանաց,) և վարիչ Երեսփ· Ժողովոյ, (կամ՝ ի դիմաց կառավարութեան ուղղիչ խորհրդարանական աշխատութեանց)·

Քիչ ժամանակի մէջ, իբրեւ վարչական մարդ, իբրեւ քաղաքագէտ, իբրեւ պերճախօս ատենաբան և մինչեւ իսկ իբրեւ գրագէտ և արուեստագէտ Պ· Արթուր Պալֆուր մեծ տաղանդ և կարողութիւն ցուցուց, և այսօր Անգլիոյ ամենէն անուանի պետական մարդոց մին է· Լորտ Սալզպըրիի գերդաստանին այս հանճարեղ ծնունդը բովանդակ Անգլիոյ նոր սերնդեան ամենէն հանճարեղ մարդոցմէն մին հանդիսացած է, և իր ճամբան բաց կ'երեւի մինչեւ ի Նախարարապետութիւն·

Իռլանտայի «գլխաւոր քարտուղարութիւնն», այսինքն՝ իրապէս Իռլանտայի վարչապետութիւնը՝ գործնականի մէջ շատ դժուարին պաշտօն մ'է, թէ՛ այն պատճառաւ որ Իռլանտա բովանդակ Բրիտանեան Տէրութեան ամենէն դժուար կառավարուող մասն է, և թէ այն պատճառաւ որ անգլ· գլխաւոր կուսակցութիւններն իրարմէ բաժնող մեծագոյն խնդիրը տարիներէ ի վեր իռլանտական խնդիրն է, որ շատ մը Նախարարութեանց և շատ մը իռլանտական վարչապետաց գլուխը կերած է (*)·

Լորտ Սալզպըրի վերջին անգամ Նախարարութիւն կազմելուն առթիւ իր ծրագիրը մատուցանելով Խորհրդարանին և երկրին, ըսած էր թէ «Մեր մտօք արդարութիւն համարուած բաները պիտի ընենք՝ գոհացնելու համար իռլանտական ազգին բանաւոր պահանջները· բայց ինքնօրինութիւն պիտի չտանք, և ապահով ենք թէ բաւական տարիներ զօրեղապէս կառավարելնէս ետքը քոյր կղզին, իռլանտացիք իրենք պիտի հրաժարին ինքնօրինութեան պահանջումէն, ո՛րքան բարւոքած պիտի գտնեն իրենց վիճակ·»

Այս ծրագիր ի գործ դնելու համար Լորտ Սալզպըրի ուրիշի վրայ վստահութիւն չունեցաւ բայց միայն իր քեռորդւոյն վրայ, որոյ ընդունակութիւններն ու կարողութիւններն երեւի թէ ինք ամենէն առաջ դիտած էր· Պ· Պալֆուր ըստ կարելւոյն արդարացուց իր մօրեղբօր համարումը· Լորտ Սալզպըրիի հնչակած քաղաքականութիւնն աւելի մեծ յաջողութեամբ չէր կրնար գործադրուիլ· Պ· Պալֆուրի իշխանութեան ներքեւ, իռլանտական պաշտօնէութիւնք աւելի չթողուցին ապօրէն գործունէութեանց, ինչպէս Պոյքոթ, Փառնէլեան [illegible], եւն·, որոց նպատակն էր վհատեցնել անգլիացի հողատէրներն և անգլիացի պաշտօնէութիւններն, և հարկադրել անգլ· կառավարութիւնն՝ ինքնօրինութիւն տալով Իռլանտայի՝ գլխու մեծ ցաւէ մը ազատիլ· Պ· Պալֆուրի ազդու վարչութեան ներքեւ, «Հողագործական» ոճիրք նուազեցան, իռլանտացի ժողովրդեան դրական կարգ մը պահանջմանց գոհացում տրուեցաւ, օրինակի համար՝ օրէնք մը հաստատեցաւ որով իռլանտացի երկրագործք կարող են իրենց մշակած հողին տէր դառնալ, գնման պէտք եղած դրամը փոխ առնլով կառավարութենէն, և իրենք ապա մաս առ մաս հատուցանելով կառավարութեան· Կարգ մը հանրային շինութիւնք ի գործ դրուեցան· Աղքատ ժողովրդեան զանազան նպաստներ եղան· Դատական, կալուածական և վարչական կարգ մը ծախք և ձեւակերպութիւնք պարզուեցան· Մինչեւ իսկ Նախարարութիւնը ձեռնարկեց ուսումնասիրել նոր ծրագիր մը Իռլանտայի զանազան գաւառաց տալու համար գաւառային ինքնօրինութիւն, հաստատամբ ընտրեալ գաւառական երեսփոխան ժողովոց, և այլն·

Իրաւ, իռլանտացի Ինքնօրինականք և Կլատսթոնեանք գործն ուրիշ կերպ կը մեկնեն· Կ'ըսեն թէ Իռլանտացիք հանդարտած են առ այժմ, իրենց դատին վերջնական յաղթանակը մօտալուտ տեսնելով, քանի որ Անգլիոյ երկու մեծագոյն կուսակցութեանց մին յարած է իռլանտական ինքնօրինութեան գաղափարին· Բացատրութիւնն ինչ որ լինի, արդիւնքն այս է որ Պ· Պալֆուրի վարչութեան ներքեւ Իռլանտայի ներքին վիճակը բարւոքման նշաններ ցուցած է·

Խօսք կար Պ· Սմիթի յաջորդ կարգել զՊ· Կոշըն, կլատսթոնեան ազատականն որ համամիտ չլինելով Պ· Կլատսթոնի իռլանտական ծրագրին, յարեցաւ Լորտ Սալզպըրիի Նախարարութեան, յորում ելմտական Նախարարի պաշտօնը կը վարէ իբրեւ ճշմարիտ աշակերտ Պ· Կլատսթոնի, մեծաւ ճարտարութեամբ և արդիւնաւորութեամբ· Բայց ճշդիւ այս պաշտօնին մէջ այնքան կարեւոր են Պ· Կոշընի ծառայութիւնք որ Լորտ Սալզպըրի չուզեց ելմտականէն աւելի քաղաքական պաշտօն մը տալ անոր, Երեսփ· Ժողովոյ վարիչ կարգելով·

Զրուցուեցաւ նաեւ թէ Լորտ Սալզպըրի պիտի հրաւիրէ զԼորտ Հարթինկթըն վերջնապէս միանալ պահպանողական Նախարարութեան հետ, իբրեւ յաջորդ Պ· Սմիթի· Յայտնի է թէ Լորտ Հարթինկթըն պետն է այն «Միութենական» Ազատականաց որք Պ· Կլատսթոնէ բաժնուեցան իռլանտական խնդրոյ պատճառաւ· Բայց Լորտ Հարթինկթըն ուխտեր է ազատական մնալ, որչափ եւս՝ Խորհրդարանին մէջ՝ ամեն կարեւոր խնդրոց առթիւ պահպանողական Նախարարութեան կողմը կը բռնէ, վախնալով զի մի՛ գուցէ Լորտ Սալզպըրի վարչութենէ ելնայ, և Պ· Կլատսթոն վերադառնայ յիշխանութիւն իւր ինքնօրինական ծրագրով, զոր Լորտ Հարթինկթըն ամենամեծ դժբախտութիւն կը համարի անգլիական Տէրութեան միութեան ու զօրութեան համար· Եւ յետոյ, կ'երեւի թէ հինգլուխ Պահպանողականք չպիտի հանդուրժէին որ քանի մը տասնեակ ազատականներու հերձուեալ խմբակի մը պետն, յանկարծ պահպանողական դառնալով, Թօրի Նախարարութեան մէջ կարեւոր պաշտօնի մը կոչուէր, և պահպանողականներու հրամայէր·

Հետաքրքրաշարժ է իմանալ թէ Լորտ Սալզպըրի որո՛ւն յանձնած է Իռլանտայի վարչապետութեան պաշտօնը, զի որպէս 1886ին, արդի Նախարարութեան կազմութեան օրն, այսօր ալ դեռ եւս Իռլանտայի վարչապետութիւնը Նախարարական պաշտօններու կարեւորագոյններէն է·

Կլատսթոնեանք, 1886ին արդի Երեսփ· Ժողովոյ կազմութենէն ի վեր մասնակի ընտրութեանց մէջ իրենց տարած յաջողութիւններն հաշուելով, և անտի մակաբերելով թէ ընտրողաց 100ին ո՛րքանն իւր կարծիքը փոխած և Պ· Կլատսթոնի ծրագրին յարած է, կ'եզրակացնեն թէ առաջիկայ ընդհանուր ընտրութեանց մէջ անպատճառ Պ· Կլատսթոն պիտի յաղթանակէ, այսինքն՝ 35էն մինչեւ 55 կուսակցաց մեծամասնութիւն պիտի ունենայ Երեսփ· Նոր Ժողովոյ մէջ, անկախաբար իռլանտական կուսակցութենէն, որ սակայն անշուշտ Պ· Կլատսթոնի պիտի հետեւի Իռլանտայի ինքնօրինութեան հաստատման խնդրոյն մէջ· Եթէ Պ· Կլատսթոն Նոր Նախարարութիւն մը կազմէ, ինք անձամբ պիտի չառնայ եղեր Նախարարապետի և Գանձարանի առաջին Լորտի պաշտօնով, Երեսփ· Ժողովոյ վարիչի պաշտօնն և ընդ նմին վիճաբանութիւնները վարելու ծանր հոգը թողլով իր տեղակալին Սըր Ուիլեըմ Հարքորդի, Պ· Ճօն Մորլի Իռլանտայի վարչապետ պիտի լինի նորէն, Լորտ Ռօզպերի արտաքին գործոց Նախարար և Պ· Ճէյմս Պրայս, Արեւելեայց ծանօթ հեղինակն Վերելեցն ի Մասիս, պիտի դառնայ արտաքին գործոց խորհրդականի պաշտօնին· Պահպանողականք, աւելորդ է ըսել, չեն հաւատար կլատսթոնեան հաշիւներուն: Անոնք միայն իրենց պետին՝ Լորտ Սալզպըրիի կը հաւատան, և անոր կարեւոր յաջողութեանց արտաքին ու ներքին քաղաքականութեան վերաբերեալ խնդրոց մէջ· Եւ Կլատսթոնեանց հաշիւներուն ի պատասխանի, կ'ըսեն· «Նախ կերէք և ապա գոհացէք»·

(*)· Պ· Պալֆուրի նախորդներէն միոյն՝ Լորտ Հարթինկթընի կրտսեր եղբայր Լորտ Քավէնտիշի եղերական վախճանն (իռլանտացի ծայրայեղներու ձեռամբ) ծանօթ է·

ՅՈՒՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Նէօլօգօս լրագիրն իւր շաբաթ աւուր Թուոյն մէջ Պատրիարքական ընտրութեան առթիւ ուշագրութեան արժանի յօդուած մը հրատարակած է զոր մեր աշխատակից Մեծ· Տ· Զօլաքեան թարգմանաբար մեզ հաղորդած է· Ահաւասիկ այդ յօդուածի մի մասը·

Օրթոտոքս Եկեղեցւոյն բարձրագոյն գահոյից գլխաւոր Բահանայապետին մօտակայ ընտրութիւնն, յորմէ կախում ունին Ազգին և Եկեղեցւոյն այնքան շահերն, կը պարտաւորէ զմեզ դիտել թէ որպիսի անհրաժեշտ պարտականութիւններ կը պահանջուին ամեն օրթոտոքս անհատէ և մասնաւորապէս սոյն ընտրութեան մասնակցելի անձինքներէ·

Վերջերս մեծ աղմուկ և խռովութիւն տեղի ունեցաւ ընտրողաց իրաւանց վերայ և բազում սահմանադրական և օրէնսգիտական խնդիրներ պարզուեցան, սակայն փութով հնազանդեցանք և կը հեռանամք պարզելէ քրիստոնէական և ազգային պարտաւորութիւնքը զորս պարտին ունենալ ընտրողք՝ Ազգին և Եկեղեցւոյն բարձրագոյն գլխաւորին ընտրութեան մասին· Կուսակցական ըմբշամարտութեան մէջ գլորելով՝ և իւրաքանչիւրն մենէ իւր հակառակորդին յաղթելու անափառ տենչն ունենալով՝ բաւական տարիներէ ի վեր մեր Ազգապետին ընտրութիւնը կրից՝ չնչին պատուասիրութեան և շահուց անսուրբ ելեւելի ասպարէզ կացուցինք, և չարագոյնն այն է թէ՝ աշխատեցանք եւ կաշխատինք ցարդ, կղերականաց և ժողովրդեան միջեւ վիհ մը բանալու, ջնջելով բոլորովին այն նուիրական ներդաշնակութիւնն որ ամբողջ և բազում դարուց մէջ մեր ազգային էութեան երաշխաւորն, և մեր ազգային վերածնութեան աւազանն եղած է· Ջնջեցինք [illegible] Եկեղեցւոյն հրապոյրն և զօրութիւնն, Եկեղեցւոյն՝ որ է աւանդապահ մեր ազգային իրաւանց և առանձնաշնորհմանց· Իջեցուցինք անոր այնպիսի հարուածներ զորս չկրեց գուցէ ամենաոխերիմ թշնամիներէ· Կացուցինք զայն աւար ամենայն նենգութեան՝ պակսեցնելով իրմէ պահպանութեան ամենէն հզօր զէնն՝ պատկառանքն և յարգանքը զոր մինչեւ ցարդ կ'ազդէր կղերին և ժողովրդեան միջեւ եղած սերտ և անխզելի միութեան վրայ յենլով և որ էր մեծ և ակնածելի զօրութիւն մեր Քահանայապետաց·

Արդարեւ ի՞նչ խորագոյն վէրք կարելի էր բացուիլ մեր բարձրագոյն եկեղեցական և ազգային կեդրոնին, երբ՝ շահերէ և կամ անձնական համակրութենէ կամ հակակրութենէ դրդեալ ազգայնոց մի մասը նուիրական խաչակրութիւն կազմելով՝ կը պատերազմի ընդդէմ կղերականութեան ; պակսեցնել ուզելով անկէ ազգին և եկեղեցւոյն պահանջմանց վերայ կարծիք ձեւացնելու և յայտնելու իրաւունքն որ ամեն անհատի արդար եւ անխզելի իրաւունքն է· Ի՞նչ առաւելագոյն ամբարշտութիւն ցուցուցած կը լինինք երբ կը քարոզենք որ՝ մեր իւրաքանչիւրոյն անհատական կածիքն ճշմարտութեան անսխալ դատաւորն է, և թէ՝ մենէ իւրաքանչիւրն ունի բացարձակ մենավաճառութիւնը նախանձախնդիր լինելու ազգին և եկեղեցւոյ համար և նորա գործոց և անձանց վերայ միայն մեզ կը պատկանի դատել և ոչ կղերականաց դասուն, կղերականաց՝ որք բազում դարերէ ի վեր ազգին և եկեղեցւոյ իրաւանց պաշտպանութեան նախամարտիկները լինելով նախ իրենք ինքզինքնին վտանգներու ենթարկած են· Կը պահանջե՞նք որ կղերականք պարտին ծառայական և անզգայ գործիք լինել այս ինչ անձին կամ կուսակցութեան· Առաւել հակազգային դրութիւն, առաւել լիրբ մտածմունք կարելի՞ է լինել· Մեր կղերականները մեր մարմնէն եղած մարմիններն են և մեր ոսկերաց ոսկրներն են· Մեր կղերականներն իւրեանց տղայական դաստիարակութիւնն առին և իւրեանց ազգային նկարագիրը ձեւակերպեցին ո՛չ մենէ հեռի վանօրէից և [illegible] մէջ, այլ ընդ մեզ, մի և նոյն դպրոցաց գրասեղաններուն վերայ, մի և նոյն դասատուներէն և մի եւ նոյն ծնողներէն, որով և ստացած են ընդ մեզ մի և նոյն առաքինութիւնքն և պակասութիւնքը, միայն սա տարբերութեամբ որ իւրեանց բարձր դիրքին պատճառաւ ազգային և եկեղեցական իրաւանց հետ առաւել եւս կապակցեալ լինելնուն համա՛ր առաւել համարձակութիւն և զօրութիւն ունին զայնս պաշտպանելու· Երբ մենք անտարբերութեամբ մեր հանդստութիւնը վրդովել չէինք ուզեր, կղերական դասն ամենայն հանգստութիւն մէկ կողմ թողլով՝ և գրեթէ նօթի վիճակի մէջ՝ բոլոր վտանգաց ենթարկուելու պատրաստ էր· Այս [illegible] յին գործ գործած կը լինինք երբ մենք անմեղներուն մէջ միայն մեղսալից, ազգասիրաց մէջ միայն հակազգային, մեր ազգին և եկեղեցւոյն իրաւանց պաշտպաններուն մէջ միայն մատնիչ կը ներկայացնենք մեր կղերն, ուզելով որ ծառայաբար եւ անզգայութեամբ հնազանդի այս ինչ անձին եւ կուսակցութեան·

Դժբախտաբար այս ցաւալի տեսարանը կը ներկայէն վերջին երկու պատրիարքական ընտրութիւնները՝ ինչպէս և նոյնը ներկայացնել կ'սպառնայ ներկայ ընտրութիւնը·

Այս եղանակաւ մենք մեր ձեռքով կը քանդենք նուիրական շինութիւնն յորում գտանք ապաստանարան, յորում գտաւ մեր ազգը փրկութիւն և աւազան վերածնութեան· չմտածելով թէ՝ մեզ համար finis ecclesiae (վախճան եկեղեցւոյ) կը հաւասարի finis nationis, (վախճան Ազգին)ի և այս ճշմարտութեան վերայ համոզուելու համար՝ պարտինք հայեցուած մը նետել մեր չուրջ և պիտի տեսնենք թէ ո՛րքան արկածներ դիզած ենք մեր գլխուն այս ազգակործան ճանապարհը գծելէն ի վեր·

ԱՂՕԹԱԳԻՐՔ
ԸՍՏ ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹԵԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ Ս· ԵԿԵՂԵՑՒՈՅ

ԴԱՍԱՒՈՐԵԱԼ ԵՒ ԲԱՑԱՏՐԵԱԼ
Ի ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՔԱՀԱՆԱՅԷ ՄԿՐԵԱՆ

Բ· ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՍՐԲԱԳՐԵԱԼ ԵՒ ՅԱՒԵԼԵԱԼ

Կ· ՊՈԼԻՍ
Տպագրութիւն Գ· Պաղտատլեան
1891

Այս պատուական Աղօթագիրքը կը պարունակէ մեր Եկեղեցւոյ բովանդակ ժամերգութիւններն·

Նախ՝ ԿԻՐԱԿԻ օրերու կարգը մինչեւ Ս· ՊԱՏԱՐԱԳԻ խորհուրդը· և ապա ԼՈՒՐ օրերու, ԱՐԵՒԱԳԱԼԻ, ՃԱՇՈՒ, ԽԱՂԱՂԱԿԱՆԻ և ՀԱՆԳՍՏԵԱՆ (եկեսցէ) ժամերգութիւններն ամբողջ, իւրաքանչիւրոց մէջ գտնուած Քարոզներուն և Աղօթքներուն աշխարհաբառ թարգմանութիւններովը, և Ս· Պատարագի խորհրդոյն բացատրութիւններովը, և այլ և այլ ճոխ ծանօթութիւններով·

Գրքին սկիզբը դրուած է խիստ կարեւոր Յառաջաբան մը՝ յորում Հրապարակական և Առանձնական Աղօթից վրայ պիտանի տեղեկութիւններ տալով, մեր Եկեղեցւոյ Նախահարց պատրաստած սքանչելի Աղօթքներէն դուրս, օտար Աղօթագրքեր գործածելու անպատշաճութիւնն կը ցուցնէ, և կը յորդորէ վարժուիլ, ընտելանալ մեր Ազգային եկեղեցւոյ Կարգադրութեանց և Աւանդութեանց, որպէս նաեւ Ազգային Գրական լեզուին, եւ սիրել զանոնք իբրեւ անգին յիշատակներ մեր անմոռանալի Նախնեաց, որ Քրիստո- [illegible] մեզ աւանդեցին·

Սոյն ԱՂՕԹԱԳԻՐՔ ահա՛ այսչափ ճոխութեամբ պատրաստուած, մեր Հայաստանեայց Առաքելական Ս· Եկեղեցւոյ որդիք պիտի կարենան գործածել, թէ՛ Եկեղեցւոյ մէջ իբրեւ Ժամագիրք, և թէ՛ տուներու և ճանբորդութեանց մէջ իբրև Աղօթագիրք, ուստի և ամենուն քով գտնուելու արժանի·

Այս Երկրորդ Տպագրութիւնն եւս՝ յատուկ խնամով եղած է՝ ընտիր թղթի վրայ՝ նրբաքանդակ պատկերներով զարդարեալ, և կը բաղկանայ 850 երեսներէ (իբր 200 երես աւելի քան զառաջին տպագրութիւնն,) գեղեցիկ եւ վայելուչ կազմով, առանց գնոյ յաւելման·

Պարզ Լաթակազմ	15 ղրշ·
Ոսկեզօծ »	22 »
Ոսկեզօծ Կաշեկազմ	30 »

Կը գտնուի ամեն Հայ Գրավաճառաց քով· իսկ կեդրոնատեղին է Զարդարեան Գրատունն, Կ· Պոլիս, Սուլթան-Համամ, Թիւ 12· և Բերա Ս· Երրորդութիւն Եկեղեցւոյ Բանկալը·

—)(72)(—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԵՐԿՈՒ ԱՆՄԵՂՆԵՐ

ԺԻՒԼ ՄԱՌԻ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՄԵԾ ՃԱՄԲԱՅՆԵՐԷՆ

—Պերթին բանի մը պէտք չունի·

—Քեզի՞ յանձնած է իր կողմէն պատասխանելը·

—Ոչ·

—Գլուխս կը տաքցնես· Թո՛ղ որ ինք խօսի·

Շարլօ ետ գնաց· Մինչեւ Պարուլի բերած չամբանիի շիշին քով գնաց, առաւ զայն, շրթանցը կպցուց եւ կուշտուկուռ խմեց·

Պարուլ կ'ըսէր·

—Պերթին, կը սիրեմ զքեզ, և կարծեմ թէ ճաշակիդ յարմար կուգամ, այնպէս չէ՞· Եւ քանի որ իրարու կը յարմարինք, պիտի ամուսնանանք· Հարուստ ալ եմ, քանի որ գրպաններուս մէջ ութն հազար Փրանք աւելի ստակ ունիմ·

Գրպաններուն զարկաւ· Ոսկիներուն հնչիւնը լսուեցաւ·

—Ութն հազար Փրանքով՝ շնորհքով հարսնիք մը կրնանք ընել· Եւ դուն շըրջազգեստներ ու գլխարկներ պիտի ունենաս· Կը խոստանամ մատնիներ, ապարանջաններ և օղեր ալ առնել· Ի՛նչ աղուոր պիտի ըլլաս··· Ահա, պզտիկ Պերթինս, քեզի ըսելիքս··· Ուրեմն, վաղուընէ սկսեալ, տիկ· Պարուլ պիտի կոչուիս··· գիտես որ գեղեցիկ անուն մըն է այս որ հռչակաւոր պիտի ըլլայ··· վաղը, տիկ· Պարուլ, և այսօր···

Բայլ մը առաւ դէպ աղջիկն, ձեռքը բռնեց եւ ջանաց գրկել զնա·

Պերթին ինքզինքը պաշտպանեց·

Պարուլ վայրագօրէն կը ծիծաղէր·

—Այսօր, պզտիկս, հարսանիքին գիշերը պիտի ըլլայ, հէ՞·

Բայց Շարլօ կը յառաջանար·

Իր գոց բռունցքը Պարուլի գլխուն իջաւ մուրճի մը ուժգնութեամբ·

Աւազակը կանգ առաւ, դանդաչելով ետ ետ գնաց և սայլատան պատէն արգելուեցաւ·

Ապա թէ ոչ գետին պիտի իյնար·

Հոն կայնեցաւ, անշարժ, կուրցած, քիթէն արիւն ժայթքելով, գլուխը ցնորած·

Բայց այս բանս երկար չտեւեց·

Ինքզինքին գալով քանի մը քայլ առաւ·

Աչուըներովը Շարլօն կը փնտռէր եւ արեամբ ողողեալ իր դէմքն անանկ այլանդակ էր, իր չարաշուք աչուըներն անանկ կը շողային ու վայրագ երեւոյթ մը ունէին որ Պերթին, բնազդաբար, իր բարեկամին առջեւ նետուեցաւ·

—Մէկ կողմ քաշուէ դուն, Պերթի՛ն, ըսաւ Շարլօ հանդարտօրէն·

—Ոչ, ոչ, քեզ պիտի սպանէ·

—Ես դիւրութեամբ չեմ սպանուիր··· ինքզինքս պիտի պաշտպանեմ·

—Բայց վիրաւորուած ես, տկարացած ես·

—Քիչ· Օղի խմեցի հիմա որ զիս զօրացուց· Եթէ ձախ բազուկս տկար է, աջս ամուր է, և Պարուլ քիչ մը առաջ աղէկ հասկցաւ զայդ·

—Քեզ պիտի սպանէ, կ'ըսեմ· Աչուըներուն նայէ՛· Ա՛հ, Աստուա՛ծ իմ·

Պարուլ քաշած էր իր դանակը·

Ձեռքովն հրեց Պերթինը որ գլորեցաւ խշտեկին վրայ ուր մնաց զարհուրած, բոլոր մարմինովը դողալով·

Ինչ որ ընէր անօգուտ պիտի ըլլար·

Իրեն պատճառաւ, երկու տղայք ի մահ կ'առէին զիրար·

Պիտի մենամարտէին· Եւ մահացու մենամարտ մը պիտի ըլլար·

Բայց Շարլօ յանկարծակիի չեկաւ·

Ինքն ալ ձեռքն ունէր դանակն, դաշոյնի պէս բարակ, ուղիղ եւ երկայն դանակ մը, որուն կոթը տոսախէ շինուած էր·

Ձեռքին մէջ դարձուց զայն՝ երկաթին ուղղութիւնը գտնելու համար·

Պարուլ, խուլ, անհասկնալի ձայնով մը թոթովեց·

—Գիտես որ երկուքէս մէկը աւելի է հոս·

—Այո· Երկար ատենէ ի վեր ատոր վրայ կը մտածեմ·

—Եւ կարծեմ թէ պիտի մորթեմ զքեզ, մանո՛ւկ···

—Եկո՛ւ· Քեզ կը սպասեմ·

Քրիքէ միջամտել ուզած էր, բայց Պարուլ անանկ սարսափելի ակնարկ մը նետած էր առ նա որ կոյրը յետս ընկրկած էր՝ դողահար·

Գալով Բարկյեանի, Պերթինի մօտեցած էր սա և տեսարանը կը դիտէր խուլ կերպիւ մռնչալով·

Երկու հակառակորդք, անշարժ, զիրար կը չափչփէին·

Պարուլ՝ իր հասակով գրեթէ Շարլոյի վրայ կ'իշխէր· Յայտնի էր թէ աւելի կորովի, նոյնքան թեթեւաշարժ էր· Բայց Շարլօ օժտուած էր եզական ճարպիկութեամբ մը և վագրի ճապկութեամբ մը· Ասկից զատ, իր բոլոր պաղարիւնը կը պահէր, մինչդեռ Պարուլ, գրեթէ գինով, իր սրունքներուն վրայ շատ հաստատ չէր·

Սակայն կռուոյն սկիզբն աննպաստ երեւոյթ մը ունէր Շարլոյի նկատմամբ· Եւ Պերթին, զարհուրած, ծունր իջած էր, եւ ձեռնամած՝ աղօթքներ կ'ըսէր իր պզտիկ բարեկամին համար·

Աշտանակը մարած էր, բայց քանի մը վայրկեանէ ի վեր արդէն լուսնալու վրայ էր· Նորածագ արեւը ներս կը մտնէր սայլատան ծակուծուկերէն և ոսկեկարմիր երկար սլաքներ կը ձգէր խշտեկին վրայ·

Շարլօ խոյս տուաւ առաջին հարուածէ մը զոր Պարուլ կ'իջեցնէր ճիշդ սրտին և որովհետեւ այս վերջինը գրեթէ մինչեւ գետին խոնարհած էր՝ բազուկն ընդ առաջ, Շարլոյի դանակին ծայրը Պարուլի սրունքին դիպեցաւ և խորապէս անդ թափանցեց·

—Զարնուեցա՛յ, ռռնաց աւազակը·

Բայց պայքարը վերջացած չէր· Պարուլ ըսած էր· ի մահ մենամարտ մը պիտի ըլլար այս·

Մինակ, խոցեմ եղաւ·

Սկսաւ պտուտքիլ Շարլոյի չուրջը, յարձակումներ կեղծելով և փորձելով պատին կրթնցնել զնա·

Երբեմն մոլեգնաբար կը խոյանար, աչքն առնլով զարնուիլ եթէ միայն Շարլօ ձեռքն երկնցունէր· բայց սա հանդարտելով այն արիւնէն որ ուղխօրէն կը վազէր Պարուլի սրունքէն, հիմակ պաշտպանողական դիրք կը բռնէր և կը շատանար խոյս տալով գիրկ ընդ գիրկ կռուէ մը յորում պիտի ընկճուէր·

Մնաց որ ինքն ալ շատ կը նեղուէր իր վէրքէն՝ այդ յարատեւ ճիգերուն մէջ զորս ստիպուած էր ընել և այն անբնական դիրքերէն զորս ստիպուած էր առնուլ երբեմն ինքն իր վրայ ծալիլ, երբեմն զսպանակի պէս վեր ոստնուլ· Արիւնն սկսած էր հոսիլ և ձախ ուսին երկայնութեամբը մինչեւ բազուկը կը զգար անոր տաքութիւնը·

Յանկարծ, ծակի մը մէջ սայթաքեցաւ, սխալ քայլ մը առաւ·

Անասունի թափով մը Պարուլ եկած միացած էր· Անոր վրայ ինկած էր ձեռն ամբարձ եւ դանակին երկաթը ճամբան արեգական ճառագայթի մը հանդիպեցաւ·

Բայց Շարլօ բռնած էր Պարուլի բազուկն եւ բովանդակ ուժովը կը սեղմէր զայն· Ուժը շատ չէր, աւա՛ղ, վասն զի այս պահուս իր կեանք կախում ունէր իր վիրաւոր բազուկէն·

Եւ Պարուլ, ձախ ձեռքով, խլած էր անոր դանակը·

Ստուգիւ լմնցած էր Շարլոյի գործը·

Պերթին նուաղած էր·

Քրիքէ, այս պայքարին ազդած սարսափէն, դէպի դուռը վազած էր· Կիսովին բացած էր զայն եւ դուրս պիտի նետուէր, երբ յանկարծ նորէն գոցեց, և սոսկումէ խեղդուած ձայնով մը գոչեց·

—Ոստիկա՛նք·

Այս գոչիւն սառուցիկ ջուրի ցնցուղի մը պէս մարեց երկու երիտասարդներու զայրոյթը·

Պարուլ գահավիժաբար ոտք ելաւ·

Այս մենամարտին ընել չի կրցածն, սոսկումն ի մի րոպէ կատարեց· Կատարելապէս գինեթափ եղած էր·

Շարլօ ինքն ալ ելած էր, բայց ծնրադրած կը մնար·

Ցնորք մը ունէր· Մահն ի մօտուստ տեսած էր, վասն զի Քրիքէի աղաղակած պահուն՝ Պարուլի բազուկը թող կուտար··· եւ աղէկ մը չէր հասկնար թէ ի՛նչ կանցնէր կը դառնար·

Պարուլ դէպի դուռը վազած էր·

—Ի՞նչ ըսիր, հարցուց Քրիքէի խեղդուկ ձայնով·

—Ոստիկա՛նք··· սուտ չեմ·

—Ձգէ՛ որ նայիմ·

(Շարունակելի)

ՍՈՒՏԱՆ

Եգիպտոսի լրագիրք կ'իմանան Սուտանէ թէ շատ մը Սուտանցիներ, որք յառաջագոյն ծառայած էին եգիպտական հին բանակին մէջ և յետոյ Խարթումի Էմիրին կողմն անցած, վերջերս Էմիրին դէմ ելնելով՝ իրենց զէնքերով փախեր են։ Որովհետեւ Խարթումի Էմիրը կ'ուզէր այս զօրաց տեղ իրեն անձնական պահակազօրք կարգել բուն եգիպտացի զինուորներ, որք Սուտանի պատերազմաց մէջ Խարթումի Էմիրին գերի ինկած են։

ԿՐԹՈՒԹԻՒՆ Ի ՀՈՒՆԳԱՐԻԱ

Աւստրիոյ կրթական Նախարար Պառոն Կաւչ ժամանակիս պահանջմանց համաձայն շրջաբերական մը զրկեց հանրային վարժարանաց տնօրէններուն, ի մասին դասական ուսմանց։ Շրջաբերականին նպատակն է յունարէնի և լատիներէնի ուսումը պարզել, իւր յոգնեցուցիչ և տաղտկալի երկարութիւններէն ազատել, և քննութեանց աւելի ճիշդ մէթոտ մը հաստատել, որով ամսէ ամիս և ո՛չ թէ վեց ամսէ վեց ամիս կամ տարուէ տարի ստուգուի աշակերտաց յառաջդիմութեան չափը։

ԿՂԵՐՆ Ի ՀՈՒՆԳԱՐԻԱ

Հունգարիոյ Երեսփ. Ժողովոյն հոկտ. 14ի նստին մէջ հարցուեցաւ թէ ինչո՛ւ համար այսչափ երկար ատենէ ի վեր թափուր կը թողուի Հունգարիոյ դահերէց-արքեպիսկոպոսութեան աթոռն, յորմէ հետէ մեռած է Կարդինալ Սիմոր։ Լուր ելած լինելով թէ մեծաւ կառավարութիւնն Էրլաւի Սամաչա արքեպիսկոպոսն այս բարձր պաշտօնին անուանել ուզեր է, բայց Վատիկան չէ հաւաներ, ազատական Ուկրօն երեսփոխանն հարցապնդում մ'ըրաւ, յոյս յայտնելով թէ «Հունգարիոյ առաքելական թագաւորական կառավարութիւնն Հռոմայ հրամանին չպիտի հպատակի՝ դահերէցի մ'ընտրութեան մէջ»։ Այս յայտարարութիւն ջերմապէս ծափահարեցաւ, յորմէ կ'երեւի թէ ժողովոյն զգացմանց կը համապատասխանէր։

ՊԱԼՔԱՆԵԱՆ ԴԷՊՔԵՐ ԵՒ ԽՆԴԻՐՆԵՐ

Վիեննայէ կը հեռագրէ Թայմզի իրազեկ թղթակիցն, հոկտ. 14ին.

«Մերթ ընդ մերթ ուշադրութիւն պէտք է դարձունել Սերպիոյ զինուորական գործողութեանց։ Զի թէեւ պատերազմի զրոյցք չկան այս պահուս, Սերպիոյ պաշտպանողականութիւնք կը բարւոքին և կը կատարելագործուին՝ [illegible] ծուելու համար, ընդ ռուսական ներշնչմամբ։

«Մի քանի օրէն բերդի խոշոր թնդանօթներ Օտեսայէ պիտի բեռցուին Կակարինի ռուսական Դանուբեան Ընկերութեան շոգենաւերուն մէջ, և Պելկրատ պիտի զրկուին։ Այս թնդանօթք, որք Ռուսիոյ կողմէ կը տրուին, պուլկարական սահմանագլխին դէմ գտնուող սերպիական ամրութիւնները պաշտպանելու պիտի գործածուին։ Նաեւ, ֆրանսական Պանժ գործարանը 12 հրետանի (72 կամ 96 հատ) դաշտային թնդանօթ պիտի յանձնէ մինչեւ յունուար 1։ Այս հրետանեաց միջոցաւ, Սերպիոյ թնդանօթաձիգուժը պուլկարականին գրեթէ պիտի հաւասարի։ Եւ որպէս զի բան մը չպակսի, Սերպիոյ պատերազմական Նախարարը Փիրոդ գնաց, սահմանապահ բերդերու պահապան զօրքն աւելցնելու։»

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Մարսիլիոյ քաղաքապետը քաղաքային խորհրդոյ վերջին նստին մէջ յայտարարեց թէ Պ. տը Ֆրէսինէի և պաշտօնակցաց անցքին ժամանակ սուլողները քանի մը ստահակներ էին միայն որք վարձուած էին անկարգութեան համար։ Ընկերվարական անդամ մը այս յայտարարութեան դէմ խօսելով, պնդեց թէ այն հականախարարական գործն ընողները գործաւորներ էին բստ մեծի մասին։ Բայց արմատական երեսփոխան և քաղաքական խորհրդոյ անդամ Պ. Փէյթրալ, հաստատելով քաղաքապետին խօսքը, բացատրեց թէ առանց ուրիշ մը վարձուելու հականախարարական արտայայտութիւն ընող մարդիկ տեղական գործոց առթիւ իրենց զգացումն յայտնած էին։ Զի տեղացիներէն շատեր գժգոհ են նոր տուրքի մը հաստատութենէն՝ կոյուղիներու շինութեան առթիւ, և գժգոհ են նաև որովհետեւ Մարսիլիոյ ըմպելի ջուրն աւելի մաքուր տեսակէ և աւելի առատ ունենալու համար տակաւին բան մը չէ եղած։ Պ. Փէյթրալ եզրակացուց թէ հականախարարական դէպքն ընդհանուր քաղաքական հանգամանք չունէր։

—Պրեստ քաղաքը, Մանշ ծովուն վրայ, կը պատրաստէ արժանապէս ընդունիլ ռուսական երկու մարտանաւեր, որոց սպայներուն եւ նաւազներուն ի պատիւ հացկերոյթ պիտի տրուի, նաեւ թատերական ներկայացում և դիմակաւոր պարահանդէս պիտի կազմակերպուին։

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳԻՒՏ

Քէօլնի լրագիր մը կը նկարագրէ հեռագրական նոր մեքենայ մը, զոր Գերմանիոյ հեռագրաց տնօրէնն հնարած է, և փորձն արդէն յաջող արդիւնք տուած է։ Այս գիւտ նախապէս սահմանեալ էր հեռաւոր տեղեր հեռագիր զրկելու համար։ Մեքենայն բաղկացեալ է ելեկտրական երկու գործիքէ, մին միայն դրական, միւսը միայն ժխտական հոսանք արտադրող։ Այս զոյգ մը գործիք շարժման մէջ կը դնեն ծակող գործի մը, որ ծակեր կը բանայ հեռագրական ժապաւէնին վրայ։ Արդ, այս ծակեր, փոխանակ միայն գծեր կամ կէտեր լինելու, որպէս Մորսի դրութեան մէջ, այնպէս իմն կարգադրուած են որ երբ գծերով միացուին, լատիներէն այբուբենի գրեր կը կազմուին, որով ինքնին կը կարդացուին, թարգմանուելու չեն կարօտիր։ Այս մեքենային գլխաւոր արժանիքն է գործածութեան ամենամեծ դիւրութիւնն, որով շատ աւելի գործ կարելի է տեսնել անով։ Օրինակի համար, Պերլինի և Համպուրկի Սակարանաց միջեւ փորձուելով, որք իբր 200 մղոն հեռի են իրարմէ, կարելի եղաւ մէկ ժամու մէջ 65-85 հեռագիր զրկել, կամ վայրկեանը 25-35 բառ։ Աւելի շատ պիտի կրնար բանիլ, եթէ պաշտօնէին մատերն աւելի շատ կարենային շարժիլ։ Հասարակութիւնը դիւրաւ պիտի սովրի ծակուած ժապաւէնին ընթերցումն, և դոյզն վարժութեամբ պիտի կրնայ իւր հեռագրերը գծաձեւած յանձնել պաշտօնէին, անմիջապէս հեռագրուելու համար։

ԻՏԱԼԻԱ ԵՒ ՖՐԱՆՍԱ

Պառոն Պլան, կ. Պոլսոյ Նախորդ իտալեան դեսպանն, Հռոմ հասնելով, իւր կարծիքն յայտնած է քանի մը խմբագիրներու, որք փութացած էին տեսնել զինք։ Նախորդ դեսպանը գոհ չէ Իտալիոյ արդի նախարարութենէն, որ իւր հրաժարականն ընդունած է 37 տարւոյ ծառայութենէն ետքը։ Պառոն Պլան գոհ չէ ֆրանսական և ռուսական ազդեցութեանց ընդարձակումէն յԱրեւելս, որոյ դէմ մաքառիլ կ'ուզէ, Անգլիոյ և Գերմանիոյ աջակցութեամբ իտալեան ազդեցութիւնն հաստատելով անոնց տեղ։ Կը ցաւի որ Արեւելից մէջ իտալեան վարժարաններ բանալու համար Պ. Քրիսփիի մեծ և յուսալից խորհուրդը մի կողմ կը դրուի իւր յաջորդին օրով։ Նախորդ դեսպանն ո՛չ այնքան Պալքանաց որքան Ասիոյ կողմէ վտանգ կը տեսնէ, ուստից յառաջխաղացումը պիտի բերէ պատերազմ։ Անգլիական լրագիրք կ'արծարծեն այս ասիական խնդիր, որոյ գոյութիւնն անգամ կ'ուրանան ֆրանսական լրագիրք, իսկ Իտալիոյ մէջ բնաւ միտ չի դրուիր այս խնդրոյ։ [illegible] ամիս մը կենալէ ետքը պիտի դառնայ յԻտալիա, և քաղաքական գործերով պիտի զբաղի ամենայն եռանդեամբ։ Գալ ամառ կ. Պոլիս պիտի այցելէ բարձրագոյն հրաւէրի մը համաձայն։

ԼՈՐՏ ՍԱԼԶՊԸՐԻ

Լորտ Սալզպըրի թէեւ Լոնտոն դարձաւ, բայց քաջառողջ չերեւիր։ Ժամանակէ մ'ի վեր շատ ծերացեր է։ Քիչ ատենէն վերստին պիտի մեկնի եղեր դէպ ի հարաւային Ֆրանսա, ուր սքանչելի դղեակ մը կառուցած է իրեն համար։

ՉԻՆԱԿԱՆ ԴԺԳՈՀՈՒԹԻՒՆ

Դիւանագիտական գայթակղութեան մը առաջքն առնելու համար, և իւր երկրին պատիւը պաշտպանելու համար, Փեքինի կառավարութիւնն որոշեց ճշդիւ վճարել այն գումարներ զորս Փարիզի չինական նախկին ներկայացուցիչ Չէնկ Քի-Թոնկ զօրապետ նենգութեամբ փոխ առեր է ֆրանսացի սեղանաւորներէ, «յանուն Չինու կառավարութեան»։—Իսկ չինացի դիւանագէտն որ Չին կանչուած էր, անյայտ եղած է։ Կը կարծուի թէ մահուամբ պատժուած լինի։

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԱՍԻՈՅ ԽՆԴԻՐ

Անգլ. լրագիրք կը ծանուցանեն թէ ռուս զօրաց ի Փամիր ներկայութիւնն, Աֆղանիստանի և Չինաստանի սահմանաց վրայ, բանակցութեանց պատճառ պիտի լինի Ռուսիոյ և Անգլիոյ միջեւ։ Ռուսիոյ դեսպանն, անգլ. դեսպանն ի Փեթերսպուրկ և չինական դեսպանատան քարտուղարը Լորտ Սալզպըրիի հետ տեսակցեցան։ Ռուս յանձնախումբ մը Փամիր պիտի երթայ, անգլիացի, չինացի և աֆղան պատուիրակաց հետ համաձայնութեամբ այն կարեւոր երկրին սահմաններն որոշելու։

ՎԱՒԵՐԱԳԻՐ

Ուսումն. Խորհրդոյ Ազգ. Կեդր. Վարժարանի

Ազգ. ուսուցիչներէն՝ Պ. Բարսեղ Եզնէքեանի աշխատասիրութեամբ պատրաստեալ ՏԱՐԵՐՔ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ դասագիրքն Ուսումն. Խորհուրդս քննելով օգտակար գտաւ զայն ազգ. մանկանց ընթերցանութեան, և կարօտէ նորա գործածութիւնն յԱզգային վարժարանս։

Ի դիմաց Ուսումն. Խորհրդոյ
Վ. Ատենադպիր Ատենապետ
Ա. Ց. ԱՐԱՊԵԱՆ Ռ. Ց. ՊԸՐՊԸՐԵԱՆ
12 օգոստոս 1891
(Կնիք)

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Երուսաղեմայ Պատրիարք Ամեն. Տ. Յարութիւն Սրբազան օրհնութեան կոնդակ մը ուղղած է Քաղաքական Ժողովոյ անդամոց, իւր հայրական օրհնութիւնները ձօնելով և կարողութիւն ու յաջողութիւն մաղթելով։

Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան Աբբահայր Այտընեան Հայր Արսէն Գերապայծառ՝ իւր հետ ունենալով Գեր. Թոռնեան ու Ծաղիկեան վարդապետները, երէկ երեկուն ժամ 10 ½ին Ազգ. Պատրիարքարան եկաւ և այցելութիւն տալով Ամեն. Ս. Պատրիարք Հօր, կէս ժամու չափ տեսակցեցաւ Ն. Ամենապատուութեան հետ։

Ազգ. Վարչութիւնը մերժած է Գեր. Խորէն եպիսկոպոս Մխիթարեանի հրաժարականն յառաջնորդութենէ Եդեսիոյ և Ամեն. Ս. Պատրիարք Հայրը՝ Ն. Գերապատուութեան հաղորդելով Վարչութեան այս որոշումը, հրաւիրած է զնա վերստանձնել իւր պաշտօն։ Արդէն նոյն վիճակէն ժողովրդեան հանրագիրք խնդրած էին Պատրիարքարանէն մերժել իրենց Գեր. Առաջնորդին հրաժարականը։

Ն. Վարդուհեան եւ Ս. Սահակեան վարժարանաց խնամակալութիւնք պատիւ ունին հրապարակաւ յայտնել իւր անհուն շնորհակալիքն Ամեն. Ս. Պատրիարք Հօր, նոյնպէս և Գեր. Բարթուղիմէոս և Գեր. Մատթէոս Իզմիրլեան Սրբազանաց և այլ եկեղեցական Ս. Հարց, նաեւ Կրթական Տեսուչ Մեծ. Կարապետ էֆէնտի Իւթիւճեանի, և այլ հրաւիրեալ Մեծ. քննչաց և հանդիսականաց որք բարեհաճեցան պատուել և մեծ շուք տալ վարժարանաց մրցանակաց եւ վկայականաց բաշխման հանդէսին։

Ի Դիմաց Խնամակալութեան
Ատենադպիր Ատենապետ
Ս. ԱԳՏԱՐԵԱՆ Ց. ԿՐՃԻԿԵԱՆ
7 Հոկտեմբեր, 1891
Սամաթիա

Գառը-Գիւղի Թաղական Խորհուրդն այս կիրակի օր ընտրուեցաւ հետեւեալ կերպով.

Բարսեղ	էֆ.	Ղազարոսեան
Գառնիկ	»	Ցնտըլեան
Թորոս	»	Գափամաճեան
Կուռնիկ	»	Համամճեան
Յարութիւն	»	Մոստիչեան
Տիգրան	»	Յովակիմեան

Թաղական Խորհուրդը կ'ամբողջանայ անդամակցութեամբ Միհրան էֆ. Շիրինեանի որ, ինչպէս կը յիշուի, Նախորդ [illegible] րած։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊԱՇՏՕՆԱԲԱՇԽՈՒԹԻՒՆՔ ՊԱՏԻԺԱՆՔ ԵՒ ՊԱՏՈՒԱՆՇԱՆՔ

Զօր գաւառին կառավարիչ անուանեցաւ Հաֆըզ փաշա, կառավարիչ Բրիշթինէի։

Սանիյէի երկրորդ աստիճան տըրուեցաւ Եանեայի Էրկէրի գաւառին Նախնական դատարանին ընդհանուր դատախազի օգնական Իզմէր պէյի։

Երրորդ կարգի Օսմանիէ պատուանշան տրուեցաւ ի Պրիւսէլ հրատարակուող «Ինտէբանտանս Պէլժ» լրագրոյ տէր և տնօրէն Պ. Կասիմօն Պրատիի։

Չորրորդ կարգի Օսմանիէ՝ Կարնոյ ամրութեանց շինութեան յանձնաժողովին անդամ հազարապետ Նուհ Նաճի պէյի։

Ի ԿԱՅՍ. ՊԱԼԱՏ

Բարձր. Մեծ-Եպարքոսը, Ներքին գործոց Վսեմ. Նախարարն և Ոստիկանութեան Նախարար Վսեմ. Նազըմ պէյ երէկ կայս. պալատ գնացին և առին Վեհ. Սուլթանի հրամանները։

Ի Բ. ԴՈՒՌՆ

Ռուսական, Հելլենական, սպանիական ու պարսկական դեսպանք և իտալական դեսպանատան գործակատարն երէկ Բ. Դուռն երթալով, յաջորդաբար տեսակցեցան Բարձր. Մեծ-Եպարքոսին ու Արտաքին գործոց Վսեմ. Նախարարին հետ։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

(Թէքվիմ Վէգայիէն քաղուած)

Պետական Խորհրդոյ ու Նախարարաց Խորհրդոյ որոշմամբ, որ վաւերացած է կայս. Իրատէով, արտօնութիւն տրուած է կայս. անձնապահ զօրաբանակին հրամանատար Ռէուֆ փաշայի, շաքարի գործարան մը հաստատել, Ծիրըը Երկէնէ գաւառակին մէջ ունեցած իւր Սալարը ագարակին մէջ։

—Պետական Խորհրդոյ որոշմամբ, որ վաւերացած է կայս. Իրատէով, ի Պէշիկթաշ Քէօյ Իչի հրդեհէն վայրը Բոլուի դրութեամբ պիտի կարգադրուի և գետիններու բաժանմունք և շինութիւնք ըստ այնմ պիտի կատարուին։

—Ըստ առաջարկութեան Մաքսային վերատեսչութեան, կայս. Իրատէ մը արտօնած է 1250 ղրուշի ամսաթոշակ մը յատկացնել նոյն վերատեսչութեան թարգմանիչներէն Նեճիպ էֆէնտիի։

ՎԵՐԱՔՆՆԻՉ ԱՏԵԱՆ

Ըստ օրէնի, Վերաքննիչ ատենի չորս ճիւղերուն անդամք վեցամիսը մէկ անգամ կը փոխուին։ Արդ, ըստ այնմ, վերաքննիչ ատենի առեւտրական ճիւղին անդամ Գասըր էֆէնտի՝ Եղեռնադատ ատեանը փոխադրուած է, Խալայիլ Հագգը էֆէնտի՝ վերաքննիչ ատենի պատժական ճիւղն և Գաբրիէլ էֆէնտի Գաբրիէլեան՝ Ամբաստանիչ ատեանը։

ՎԱՐԺԱՐԱՆՔ

Պետական Խորհուրդն խորհրդակցութիւններ կը կատարէ այն բարենորոգմանց համար, որք պիտի գործադրուին բոլոր վարժարանաց վարչութեան և ուսմանց աւանդման եղանակին նկատմամբ։ Մէարիֆի բարձրագոյն ժողովոյ Նախագահ Հայտար էֆէնտի երէկ Պետական Խորհուրդին հրաւիրուելով, պահ մը ներկայ գտնուեցաւ կատարուած խորհրդակցութեանց։

ՄԻՐԶԱ ՄՈՀՍԻՆ ԽԱՆ

Ըստ տեղեկութեանց Թարիքի, պարսկական Նախորդ դեսպան Միրզա Մոհսին խան՝ Թէհրանէ ստացած հրահանգին համաձայն, ամսոյս վերջերը Թէհրան պիտի ուղեւորի Բէյրութ ճամբով։

ՊԱՌՈՆՈՒՀԻ ՊԼԱՆ

Իտալական Նախորդ դեսպան Պառոն Պլանի կինը՝ Պառոնուհի Պլան, երէկ երեկուն Հռոմ ուղեւորեցաւ աւստրիական ճեպընթաց կառախումբով։ Սիրքէճիի կայարանը կը գտնուէին՝ Արտաքին գործոց Նախարարութեան թարգման Միքայէլ էֆէնտի, հելլենական դեսպանը, իտալական դեսպանատան պաշտօնեայք և իտալական գաղթականութեան երեւելիք, որք ողջերթ մաղթեցին Պառոնուհւոյն։

ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ Ի Կ. ՊՈԼԻՍ

Կայս. Իրատէ մը վաւերացուցած էր այն կանոնագիրն որ կը վերաբերի Պոլսոյ յարմար մէկ վայրը հաստատելի «Նիւմունէխանէի Օսմանի» կոչուած մնայուն ցուցահանդէսին, ուր ի տես պիտի դրուին Թուրքիոյ մէջ պատրաստուած ճարտարարուեստական նիւթեր ինչպէս նաև հողային արտադրութիւնք։ Այս կանոնագիր Եպարքոսական պաշտօնագրով մը հաղորդուած է Առեւտրական և Հանրօգուտ շինութեանց Նախարարութեան, որ կայս. Իրատէին տրամադրութեանց համաձայն, սկսած էր հարկ եղած գործողութեանց կատարման։

Արդ, Եպարքոսական երկրորդ պաշտօնագիր մը նոյն Նախարարութեան հաղորդած է կայս. Իրատէ մը, որ կը հրամայէ տունկերու, անասնոց և ճարտարարուեստական արտադրութեանց համար առ այժմ ցուցահանդէս մը կառուցանել յանկոյս կամուրջին և ցուցահանդէսին մէջ Վեհ. Սուլթանին ու Նախարարաց յատուկ երեքական ու չորսական սենեակներով շէնքեր կառուցանել և ցուցահանդէսը հաստատել այնպիսի գետնի մը վրայ, զոր կարելի ըլլայ ապագային ընդարձակել։ Արդ, կայս. սոյն Իրատէին համաձայն, ցուցահանդէսին կազմակերպութեան եղանակին, տեղւոյն որոշման և այլ մանրամասնութեանց վրայ խորհրդակցելու համար յանձնաժողով մը կազմուած է ընդ նախագահութեամբ Առեւտրական եւ Հանրօգուտ շինութեանց Նախարար Թէվֆիք փաշայի։

ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ՍՆՏՈՒԿ

Պոլսոյ Ապահովութեան Սնտուկին ներկայ ելմտական տարւոյ ծախուց հաշուեցոյցն յանձնուած է Առեւտրական Նախարարութեան։ Ըստ այդ հաշուեցոյցի, ծախուց ընդհանուր գումարն իջուցուած է 420,700 ղրուշի։ Սնտուկի վարչութիւնը խնդրած է պաշտօնէից ոմանց ամսաթոշակը աւելցնել հաշուեցոյցին մէջ ցոյց տրուած 1250 ղրուշով։ Այս հաշուեցոյց ըստ այսմ վաւերացուելով յանձնուած է նոյն Սնտուկի վարչութեան։

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Սուրիոյ կուսակալութենէն եկած երկու հեռագրերու համաձայն, հոկտեմբեր 5ին Դամասկոսի մէջ հնտախտէ 35 հոգի բռնուելով, ասոնցմէ 12ն եւ առաջուան բռնուածներէ մէկ հոգի մեռեր են։ Հոկտեմբեր 6ին, նոյն քաղաքին մէջ հնտախտէ 18 հոգի բռնուելով, ասոնցմէ 5ն և առաջուան բռնուածներէն 9 հոգի մեռեր են։

Հալէպի մէջ եւս հոկտեմբեր 5ին հնտախտի նոր դէպք չպատահելով, առաջուան բռնուածներէն մէկ մահ պատահեր է. իսկ հոկտեմբեր 6ին, հնտախտի դէպք և մահ չէ պատահած։

Հալէպի մաքրանոցի քննիչը հոկտեմբեր 5 թուականաւ հեռագրած է թէ սեպտեմբեր 21էն մինչեւ 26, ի Գոնֆուտէ եօթը մահեր պատահած են հնտախտէ։ Ուրիշ հեռագրոյ մը համաձայն, ի Մէքքէ, ի Մէտինէ և ի Ճիտտէ առողջապահական վիճակը գոհացուցիչ է։

ՀԱՅ ՀՌՈՄԷԱԿԱՆԱՑ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆ Ի ՏԻԱՐՊԷՔԻՐ

Այս աւուր Թարիքի մէջ հետեւեալը կը կարդանք·

Ամբաստանիչ ատեանն ամբաստանած էր երեքն այն անձերէն, որք ի Տիարպէքիր Հայ Հռոմէականաց առաջնորդարանն այրելու ու մէջը գտնուած կարասիներն ու դրամները կողոպտելու ձեռնարկած էին։ Ամբաստանեալներէ երկուքը ձերբակալուելով մայրաքաղաքս բերուած են, իսկ երրորդը՝ Գազազեան Անտրէա անուն կրօնականը՝ տակաւին ի Տիարպէքիր գտնուելով և մայրաքաղաքս եկած չըլլալով, Ամբաստանիչ ատեանը զանի եւս ամբաստանած և ձերբակալման հրամանագիր հանած է։ Ասոնց դատաստանը տեսնուած պահուն յայտնի է թէ երեւան պիտի ելնէ թէ այդ յարձակման բուն իսկ շարժառիթն ի՛նչ է և թէ ասոնցմէ զատ ուրիշ մեղսակիցներ ալ կա՞ն։

ՅՈՒՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Նախընթաց օր կ. Պոլսոյ և արուարձանաց մէջ տեղի ունեցաւ ընտրութիւնն այն պատուիրակաց, որք պաշտօն ունին անուանել կ. Պոլսոյ երկու ներկայացուցիչները՝ նոր Պատրիարքի ընտրութեան մասնակցելու համար։ Ընտրեալներն են՝ Պ. Ժ. Բագանովա եւ Վասիլաքի Եօանիտէս էֆէնտի՝ Բերայէն, Տիօժէն Միլտիսիս՝ Վլանկայէն, Նէթիս՝ Խասգիւղէն, Վաֆիտիս՝ Ալթըմերմերէն, Տիամանտաքի էֆէնտի եւ Վասիլաքի Եօանիտէս էֆէնտի՝ Թաթավլայէն։ Բայց այս վերջին ընտրութիւն—Վասիլաքի էֆէնտի Բերայէն ընտրուելուն պատճառաւ—ջնջուած ըլլալով, նոր ընտրութեան ձեռնարկուեցաւ Թաթավլայի համար։

Պատրիարքական ընտրութեան համար ներկայացուցիչ անուանող արհեստաւորաց մէջ, գինեպան արհեստաւորք ընտրեցին զՊ. Քոնսթ. Քուրտօղլու, մսավաճառ արհեստաւորք՝ զՊ. Նէթիս, [illegible] արհեստաւորք՝ զՊ. Քոնսթ. Անանիատիս, գոհարավաճառ արհեստաւորք՝ զՃակի Քոնսթանթինիտիս եւ [illegible] արհեստաւորք՝ զՊ. Վագիլիօ Կարուֆալիտիս։

[illegible]ի եւ Կեսարիոյ նահանգաց կողմէ ընտրական ժողովին համար ներկայացուցիչ ընտրուած են Պ. Եանի Նաքօպօ եւ Քոստաքի Վահանի էֆէնտի։

ՀԱԶԱՐԱՊԵՏ ՍԹԵՖԷՆ

Գերմանական լրագիրք կը ծանուցանեն թէ Վեհ. Սուլթանն հեռագիր մը ուղղած է առ հազարապետ Սթեֆէն, հրաւիրելու համար զնա որ բստ կարի շուտ գայ ստանձնել իւր պաշտօնն՝ իբր քննիչ օսմ. թնդանօթաձիգ զօրաց։ Հազարապետ Սթեֆէն հոս ժամանելուն աչքէ պիտի անցունէ Տարտանէլի եւ Վոսփորի ամրութիւնները։ Այդ գերմանացի սպայն, ինչպէս կը յիշուի, կը յաջորդէ հանգուցեալ Սթարխ փաշային։

«ՄԱՀՍԼԼԱ»Ի ԱՐԿԱԾԸ

Էճիփշըն Կազէթի մէջ հետեւեալը կը կարդանք·

Եաֆայէն կ'իմանանք թէ ամսոյս 8, ուրբաթ, յետ միջօրէի, Աղեքսանդրիայէն և Բոր Սայիտէն եկող Խտիվիէի Մ[illegible] շոգենաւուն այդ նաւահանգիստը ժամանելուն պէս, բազմաթիւ մակոյկավարք վրան դային և սովորական խառնաշփոթութիւնն յառաջ եկաւ։

Նաւուն նաւապետը՝ Լէսքօ պէյ, առաջին սպայն և առաջին մեքենավարը՝ քանի մը նաւազներու հետ՝ ուզեցին բարեկարգութիւնը վերահաստատել և հրամայեցին մակոյկավարներուն որ նաւէն հեռանան։ Իրենց հրամանը չի գործադրուելով, սկսան սպառնալիք ընել, յետ որոյ վերջապէս սկսեցան զէնք գործածել և կրակ ընել մակոյկավարներուն վրայ, որոց մին սպանուեցաւ և երեքը վիրաւորեցան։ Մ[illegible] անմիջապէս իր ճամբան շարունակեց։

Զրոյց կը շրջէր ի Եաֆա թէ կառավարիչը հեռագրեր է եգիպտական կառավարութեան՝ ուրիշ նաւապետ մը, առաջին սպայ մը և առաջին մեքենավար մը զրկել երբ այդ նաւը Եաֆա վերադառնայ, որովհետեւ մտադիր է ձերբակալել նաւուն մէջ այդ պաշտօնները կատարող անձինքը։

ԱՐՂԸՆԻԻ ՀԱՆՔԵՐԸ

Անուանի եւ հանքաց ճարտարագէտ Պ. Բուլան չորեքշ. օր Արղընիի հանքերն ուղեւորեցաւ, անոնց շահագործման յատուկ մեքենայից հաստատութեան հսկելու պաշտօնով։ Պ. Բուլանի կ'ընկերակցի նաեւ ճարտարագէտ մը իբր ներկայացուցիչ Պ. Պ. Թուպլինիի եւ Տալէճիօի, որք այդ հանքերուն արտօնատէրներն են։

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Կարնոյ կուսակալ Հասան Խայրի փաշա, կըսէ Հ[illegible], Թորթում գաւառակն այցելելուն՝ անձամբ հսկեր է տասանորդի տրոց վարձակալութեան տրուելու գործին և յաւելումներ եղեր են։ Ն. Վսեմութիւն՝ գաւառակի կեդրոնը հաւաքելով գիւղօրէից իմամները, մուխթարները, քահանաները, կրօնական այլ պաշտօնեաներ և ժողովուրդը, ամենուն հասկնալի լեզուով բանախօսութիւն մը ըրեր և ազդու խրատներ տալով յորդոր կարդացեր է որ ժողովուրդն իրարու հետ համեբաշխութեամբ ապրին և անհաճոյ ընթացից մէջ չգտնուին։ Կուսակալն՝ այս առթիւ ժողովրդեան պետերէն ստորագրութիւններ առեր է, որովք խոստացեր են ջանալ որ ժողովուրդն անհաճոյ ընթացից մէջ չգտնուի։ Կուսակալին այս կարգադրութիւնն անգամ մը եւս ապահովեր է ժողովրդեան անդորրութիւնը։ Հասան Խայրի փաշա, կը յարէ Հ[illegible], կառավարական պաշտօնէից եւս յորդոր կարդալով, յանձնարարած է որ իրենց պաշտօնն ամենայն արդարութեամբ ու օրինաւորութեամբ ի գործ դնելով, երբ ժողովրդեան կողմէ դիմումներ ըլլան, արդարութեամբ կարգադրեն անոնց գործերը, հպատակներուն ամեն կերպիւ հանգստութեանը հոգ տանին և անհաճոյ ընթացքներէ զգուշանան։ Այս յորդորներ լաւ տպաւորութիւն մը ընելով ներկայից վրայ, ամենքն ի միասին բարեմաղթութիւններ ըրեր են վասն կենաց և բարօրութեան Վեհ. Սուլթանին։

—Կարինէն կը գրեն առ Թարիք թէ Դ. զօրաբանակին հրամանատար Զէքի փաշա ժամանակ մը Հէքքեարի մնալէ յետոյ Վան ուղեւորեր է, թէ Կարնոյ նահանգին ամեն կողմը կատարեալ անդորրութիւն կը տիրէ և թէ Իգդիրի կողմը՝ երկու պարսիկ վաճառականներ, որք Պարսկաստանէ կուգան եղեր, յարձակում մը կրեր են աւազակաց ոմանց կողմէ, սակայն կողոպտուած ապրանքներն երեւան հանուելով, յարձակողք ձերբակալուեր են և պիտի պատժուին։ Տեղական կառավարութեան այս աչալուրջ ընթացքը հանրային շնորհակալեաց արժանացեր է։

ՍԻՆԵՔԼԻԻ ԱՐԿԱԾԸ

Սէրվէթն կը գրեն հոկտ. 1/13 թուականաւ.

Ի Սինէքլի, երկաթուղւոյ կառախմբին վրայ յարձակող աւազակներն հալածելու պաշտօն ունեցող կայս. գօմիսէր Վսեմ. Էտիպ փաշայի ուղղած մէկ հեռագրոյն հետեւանօք, տեղւոյն Թապուր-Քաթիպին քաղաքին ճիշդ մօտը կառք մը կեցուց ուր նստած էին Լոֆչացի երեք գաղթականներ, որք ճիշդ կը համապատասխանէին հեռագրին հաղորդած նկարագրոյն։ Այս գաղթականաց հետ էին նաև իրենց կանայքն ու որդիքը։ Ասոնք պաշտօնատուն առաջնորդուելով, կառավարչին ներկայութեանը վրանին խուզարկուեցաւ և գտնուեցան զանազան տեսակ հին ոսկի դրամներ, օսմ. ոսկիներ, քսան ֆրանքնոցներ և գոհարեղէններ, ընդամէնը մօտաւորապէս 300 օսմ. ոսկւոյ արժէքով։

Առեւտրական և Հանրօգուտ շինութեանց Նախարարութեան հաղորդուած է կայս. Իրատէ մը, որ կը հրամայէ միջոց մը խորհիլ Ափրիկեան Տրիպոլսոյ և Բէնղազիի նահանգաց մէջ երկրագործութիւնը զարգացնելու համար։

—Այս պահուս մայրաքաղաքս կը գտնուի Պ. Լուի Փրեմացցի, որ քառասուն տարիէ ի վեր կը դասախօսէ Փեթերսպուրկի Գեղարուեստից Ակադեմիային մէջ։

Պ. Փրեմացցի տաղանդաւոր նկարիչ մըն է և խղճամիտ ու հանճարեղ նմանող մը բնութեան։ Մասնաւորապէս ջրաներկի աշխատած է և այս ճիւղին մէջ նոր դպրոց մը բացած է ի Փեթերսպուրկ, որով ստացած է արժանաւոր հռչակ մը։ Փափագ յայտնողներ կան որ իւր նկարաց ցուցահանդէս մը կազմակերպէ աստ։

—Օսմ. ապահովագրական ընկերութիւնը զոր կազմելու վրայ են Թէրնօ պէյ և Պ. Պօտոլի, 500 000 օսմ. ոսկւոյ դրամագլուխ մը պիտի ունենայ, որուն կէսը վճարելի։

—Օսմ. ծխախոտի Ռէժիի սեպտեմբեր ամսոյ հասոյթն եղած է 166 000 օսմ. ոսկի, մինչ անցեալ տարի նոյն ամսուան հասոյթն էր 152,000 օսմ. ոսկի։

—Պ. Էմիլ Տըժօ չորեքշ. օր մայրաքաղաքս դարձաւ։

—[illegible] հրամանատարը՝ նաւապետ Թոմաս Երասիմով Անգլիա ուղեւորեցաւ, բերելու համար [illegible] զոր ռուսական շոգենաւային ընկերութիւնը շինել տուած է Նիւքասլի նաւարաններուն մէջ։ Այս շոգենաւ, որ Աղեքսանդրիոյ գծին պիտի յատկացուի, երկու ամսէն հոս պիտի ժամանէ։ Ընկերութիւնն ապսպրած է նաեւ ուրիշ մեծ շոգենաւ մը Չիխաչեֆ անուն։

—Երէկ Վառնայէն մայրաքաղաքս եկան հինգ հարիւր [illegible] բուլկարացի գաղթականներ։

—Պոլսոյ քարափանց ընկերութեան ներքին կանոնագիրը Դատական Նախարարութեան ղրկուելով Նոտարութեան (Մուգավելաթ Մուհարրիրլիկի) կողմէ արձանագրուելէ յետոյ Հանրօգուտ շինութեանց Նախարարութեան կողմէ ստորագրութիւնն ու փոխանակութիւնը կատարուած է։

—Փաստաբան Մուսթաֆա Շէվքէդ էֆէնտի և ընկերք մենաշնորհ խնդրած են Պոլսոյ նաւահանգիստը եկող թէ՛ օսմանեան և թէ օտար նաւերուն հարկ եղած ածուխը դիւրութեամբ տալու համար։ Խնդրարկուք առաջարկած են տարեկան հինգ հազար ոսկւոյ գումար մը վճարել նաւահանգստի վերատեսչութեան։

—Երէկ Ելմտական Նախարարութեան պաշտօնատան մէջ յանձնաժողով մը ի նիստ գումարեցաւ ընդ նախագահութեամբ նախարար Նազիֆ էֆէնտիի։ Յանձնաժողովն, որուն ներկայ էր նաեւ Սպարապետի Դիւան գանձմանց յանձնաժողովին նախագահ Մուսթաֆա փաշա, երկու ժամու չափ խորհրդակցեցաւ։

—Յակոբ անուն վաղեմի չարագործ մը և իւր ընկերը Կուրճի Լեօն երէկ առաւօտ ի Մուսալլա, Հաճի Մելքոն անուն խանութճի մը վիրաւորելով փախան։ Յակոբ քիչ յետոյ ձերբակալուեցաւ, իսկ ընկերը կը փնտռուի։

—Եէնիգաբու բնակեալ Պետրոս անուն յիսունամեայ մարդ մը նախընթաց գիշեր իւր տան մէջ անձնասպան եղեր է կոկորդը ածելիով մը կտրելով։ Պետրոս նամակ մը ձգեր է, յորում գրեր է թէ կեանքէն ձանձրանալով անձնասպանութեան դիմած է եւ թէ պէտք չէ մէկէ մը բան մը փնտռել։ Անձնասպանին մարմինն երէկ Ոստիկանութեան Դիւանը ղրկուեր է քննուելու համար։

—Պէրութցի Մուսա էլ-Հուրի անուն անձ մը տեսակ մը տունկ գտած է որ կրնայ բուժել ամէն տեսակ վէրքեր եւ աղոր պատրաստութեան ու վաճառման համար արտօնութիւն խնդրած է Ձեռնհաս նախարարութենէն։ Այս առաջարկութիւն յանձնուած է բժշկական վարժարանի քննութեան։

ԱՌՏՆԻՆ
ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ
ՅՕՐԻՆԵՑ
Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ
(Երես 320, Գին 8 դահեկան)

Բազմարդիւն հեղինակին գրչէն ելած այս եզական գործ իրաւամբ կը կրէ յինքեան կատարելութեան դրոշմ, այնպէս որ ընդ հուպ հայ օրիորդք պիտի ունենան ընտիր դաստիարակութեան ուղեցոյց մը, որ պիտի աւանդէ հրապուրիչ ոճով Առտնին Տնտեսութեան կարեւոր գաղտնիքն։

Դիմել Կ. Պոլիս Էսկի Զապթիէ փողոց, Պէրպէրեան Տպարան։ 3—3

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

Կ. ՊՈԼՍՈՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԷՆ

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ

ՎԻԵՆՆԱ. 19 հոկտ.— Գերմանիոյ կայսրը շնորհաւորեց պատերազմական նախարարն՝ զՊառոն Պաւեր, գերմանական զինուորական կցորդին միջոցաւ։ Նախարարը անձամբ շնորհաւորող բազմաթիւ երեւելի անձանց մէջ կը գտնուէին գրեթէ բոլոր արքիդուքսերն, Ռուսիոյ, Իտալիոյ և Սպանիոյ դեսպաններն ու օսմ. զինուորական կցորդը։

——

ՓԱՐԻԶ, 19.—Թան, վաւերական տեղեկութեանց համեմատ, կը յայտարարէ թէ Պ. Կիրս երկար ատենէ ի վեր մտադիր էր իր արձակուրդն Իտալիոյ մէջ անցունել և թէ ուղեւորութիւնը բնաւ քաղաքական հանգամանք չունի։ Կը յաւելու թէ թագաւորին և Պ. տը Ռուտինիին տեսակցութիւններն ռուս նախարարին հետ, զուտ քաղաքավարական գործեր էին և թէ Պ. տի Ռուտինիի հետ տեսակցութիւնը շատ կարճ տեւած է։ (Պ. Կիրսի և Պ. տի Ռուտինիի տեսակցութեան քաղաքական հանգամանաց վրայ գրուածներէն յետոյ, Ֆրանսական կէս պաշտօնական լրագրին այս բացառական յայտարարութիւնը վերապահութեամբ պէտք է ընդունել։

—Ծերակուտական ընտրութեան մէջ յՕրլէյաք, հանրապետական— արմատական Պ. Պատուէլ Ծերակոյտի անդամ ընտրուեցաւ չափաւոր հանրապետական Պ. Միրանտի տեղ։

——

ՀՌՈՄ, 19.—Մետէորական կեդրոնական պաշտօնատունն երէկի թուականաւ հեռագիր մը ստացաւ Փանթելլերիա կղզիէն, ծանուցանող թէ երկրէն երեք քիլոմեթր հեռի արեւմտեան ուղղութեամբ ծովն յանկարծ ալեկոծեր է. մուխի սիւներ ալ կը տեսնուէին. յետոյ քանի մը գետնաշարժի ցնցումներ զգացուեր են։ Ծովուն վրայ կը դիտուի հարաւէն ի հիւսիս իբր մէկ քիլոմեթր երկայնութեամբ շարժում մը. շարունակ քարի կտորներ և ծուխ դուրս կը ժայթքեն, և միշտ նոյն հեռաւորութենէ որոտումներ կը լսուին։

——

